ՏԵՂԵԿԱՆՔ

ԱԺԲԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2018-2020 ԹԹ. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (ՀՈՒՆՎԱՐ-ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՀՀ ՊԵԿ կողմից վերահսկվող եկամուտներ)









2020 թ. հունվար-հոկտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտները և պետական տուրքերը կազմել են 1134.8 մլրդ դրամ, որը կազմում է 2020թ. տարեկան հաստատված ցուցանիշի 70.8 %-ը, իսկ տարեկան (ճշտված) ցուցանիշի նկատմամբ փաստացի ցուցանիշը կազմել է 85.9 տոկոս:

Հատկանշական է, որ 2020 թ. փաստացի ցուցանիշը 2019թ. համապատասխան ցուցանիշից պակաս է 5.2 %-ով կամ 61.9 մլրդ դրամով, իսկ 2018թ. համապատասխան ցուցանիշին գերազանցում է 13.3 %-ով կամ 133.4 մլրդ դրամով:

2020 թ. հունվար-հոկտեմբեր ամիսներին՝

- ավելացված արժեքի հարկի գծով մուտքերը կազմել են 377.4 մլրդ դրամ, որը 2019 թ. համապատասխան ցուցանիշին զիջում է 2.9 %-ով, սակայն 2018 թ. ցուցանիշին գերազանցում է 8.7 %-ով,
- շահութահարկի գծով մուտքերը կազմել են 128.9 մլրդ դրամ, որը 2019 թ. համապատասխան ցուցանիշից պակաս է 16.5 %-ով, իսկ 2018 թ. ցուցանիշին զիջում է 4.7 %-ով,
- եկամտային հարկի գծով մուտքերը կազմել են 344.4 մլրդ դրամ, որը 2019 թ. համապատասխան ցուցանիշին գերազանցում է 1.3 %-ով, իսկ 2018 թ. ցուցանիշին գերազանցում է 18.8 %-ով,
- ակցիզային հարկի գծով մուտքերը կազմել են 95.9 մլրդ դրամ, որը 2019 թ. համապատասխան ցուցանիշին գերազանցում է 0.5 %-ով, իսկ 2018 թ. ցուցանիշին՝ 13.0 %-ով,
- մաքսատուրքերի գծով մուտքերը կազմել են 53.3 մլրդ դրամ, որը 2019 թ. համապատասխան ցուցանիշին զիջում է 29.4 %-ով, իսկ 2018 թ. ցուցանիշից պակաս է 19.7 %-ով,
- բնապահպանական հարկի եւ բնօգտագործման վճարների գծով մուտքերը կազմել են 42.5 մլրդ դրամ, որը 2019 թ. համապատասխան ցուցանիշին զիջում է 2.3 %-ով, իսկ 2018 թ. մակարդակից ցածր է 6.5 %-ով,
- շրջանառության հարկի գծով մուտքերը կազմել են շուրջ 25.6 մլրդ դրամ, որը 2019 թ. համապատասխան ցուցանիշին զիջում է 8.6 %-ով, իսկ 2018 թ. ցուցանիշին գերազանցում՝ 25.7 %-ով,
- սոցիալական վճարների գծով մուտքերը կազմել են 19.9 մլրդ դրամ, որը 2019 թ. համապատասխան ցուցանիշին գերազանցում է 28.9 %-ով, իսկ 2018 թ. ցուցանիշից բարձր է 35.2 %-ով,
- այլ հարկային եկամուտներից մուտքերը կազմել են 20.6 մլրդ դրամ, որը 2019 թ. համապատասխան ցուցանիշին գերազանցում է 13.4 %-ով, իսկ 2018 թ. ցուցանիշին գերազանցում է 20.1 %-ով,
- պետական տուրքերի գծով մուտքերը կազմել են 26.5 մլրդ դրամ, որը 2019 թ. համապատասխան ցուցանիշից պակաս է 23.9 %-ով, իսկ 2018 թ. ցուցանիշին զիջում է 10.5 %-ով:

Հարկերի անցումային գերվճարները 2020թ. հունվար-հոկտեմբեր ամիսներին կազմել են -321.3 մլն դրամ՝ 2019թ. -897.7 մլն դրամի եւ 2018թ. -55.2 մլրդ դրամի դիմաց:

* ՀՀ պետական բյուջե հաշվեգրված հարկային եկամուտներ և պետական տուրքեր

** Ներառված են նաև եկամտահարկից և պարտադիր սոցիալական ապահովության վճարներից եկամուտները,

*** Այլ հարկային եկամուտներում ներառված են՝ ճանապարհային հարկը, հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, հարկային օրենսդրությունը խախտելու համար գանձվող տուգանքները և տույժերը, միասնական մաքսային վճարը, դրոշմանիշային վճարները և այլ եկամուտներ (այդ թվում նաև՝ ՀՀ ՊԵԿ արտաբյուջետային ֆոնդին մուտքագրված գումարները)

Տեղեկատվության աղբյուր են հանդիսացել ՀՀ ՊԵԿ կայքում հրապարակված տեղեկատվությունը 2018-2020թթ.

ՀՀ ՊԵԿ կողմից վերահսկվող եկամուտների վերաբերյալ